ԲՆԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Թրաձուկ :



Ձկանց մէջ խիստ յարգի ու զարմանալի է Թրաձուկ՝ ըսուածը, որ Թուրի ձեւով երկնցած ոսկորէ դունչ մը ունի . վարի դունչը խիստ կարճ է . բերնին մէջ ակռայ չունի . մարմինը գլանաձեւ կլոր է , ու վրան Թեփ² չերեւնար : Աս ձուկը երբեմն ինչուան քսան ոտնաչափէն աւելի երկայնութիւն կունենայ . մեծութեանը համեմատ է նաեւ իր ուժը եւ շատակերութիւնը . ուստի որ եւ իցէ ծովային կենդանեաց ու ձկանց վրայ կըյարձըկի ու իր սուկալի քԹովը զարնելն ու ծակելը մէկ կընէ : Մեծ վախ ու նեղութիւն կըքաշէ աստր ձեռքէննաեւ կէտը , մանաւանդ երբոր Թրաձուկները երկուք ըլլան . անոր համարնաւորդները կըպատմեն Թէ կէտը Թրաձուկի մը հանդիպելուն պէս՝ կընայի որ փախչի ազատի . ու երբոր տեսնէ Թէ փախչելու ճար չկայ՝ կըդառնայ որ Թրաձուկին հետ իր պոչովը պատերազմի : Իսկ Թրաձուկը իրեն սոսկալի արագութեամբը աստիէն անդիէն զարնելով , ատեն ատեն ալնետի պէս կէտին կռնակը ցատքելով՝ չարաչար կըվիրաւորէ ամէն կողմէն , այնպէս որ կէտին չորս դին եղած ջրերը բոլոր

1 Գըւըր՞ պաւըշը : 2 Փոլ :

ալիքնովը կըխառնուին ։ Տեսնելու բան է կըսեն ան միջոցին կէտին ցըցուցած կատաղութիւնը . ամէն մէկ անգամ որ պոչովը ջրին կըզարնէ՝ թնդանօթի ձայնին պէս արձագանգ կուտայ բոլոր ծովը ։ Բայց թրաձուկը այսպիսի կռիւներու մէջ աւելի կըվռնտուի քան թէ կըվռնտէ . վասն զի որչափ ալ զօրաւոր ու երկայն ըլլայ իր դունչը՝ կէտին կաշին ու թանձր գիրուցը հազիւ թէ կըծակէ ։

Երբեմն նաւերու հետ ալ կըկռուի թրաձուկը, և դունչովը անոնց կողը կըծակէ. ինչպէս 1757ին Հնդկաստան գնացող նաւերէն մէկուն տակը գըտնուեր է մէկ թրաձուկ մը որ դունչը սաստիկ ներս զարկեր է նաւուն փայտին մէջ, ու սաստիկ զարնուածքէն՝ կամ թէ նորէն ետ քաշել չկրնալով՝ մեռեր է . հիմա ան թրաձուկը՝ նաւուն ծակած կտորն ալ հետը, Լոնտրայի բրիտանեան թանգարանին [1] մէջ պահուած է ։

Թրաձուկը սովորաբար Միջերկրական ծովուն մէջ կըգտնուի, և աւելի Սիկիլիա ու Սարտենիա կղզիներուն քովերը . բայց ընդհանրապէս խիստ քիչ գտնուող ձկներէն մէկն է . անանկ որ Սարտենիային քովերն ալ մէկ տարուան մէջ բոլոր ելած թրաձուկը հազիւ թէ քսանէն աւելի կըլլայ . անոր համար ալ խիստ յարգի է, ու գրեթէ միշտ ընծայի տեղ կըտրուի մեծամեծներու կամ բարեկամներու, մանաւանդ պզտիկները որ շատ աւելի փափուկ ու համեղ կըլլան ։

Ոմանք կըսեն թէ երկու տեսակ է թրաձուկը . մէկը Եւրոպայի, մէկալը Հնդկաստանի . բայց Բիւվիէ անունով երեւելի բնախօսը երկուքն ալ մէկ տեսակ կըսեպէ ։ Նոյն բնապատումը կըսէ թէ երբեմն աս թրաձուկին մսին մէջ տեսակ մը խեցեմորթ կըմտնէ, ու հոն կըբնակի . թրաձուկը ասկէ այնպիսի կատաղութեան մէջ կիյնայ որ ինչուան ինքզինքը ծովեզերքը կընետէ, ու հոն կըմեռնայ ։

1 Անգղ. British museum.

Քափուր[1] ։

ՔԱՓՈՒՐԸ ճերմակ, թափանցիկ, կարծր, թեթև ու փշրուն նիւթ մըն է, հոտը խիստ սաստիկ ու զօրաւոր, համն ալ տտիպ ու քիչ մը լեղի, և մարդուս բերանը պաղութիւն մը կըձգէ ։ Աս օգտակար նիւթը թէպէտ և շատ տեսակ բոյսերու մէջ կըգտնուի, բայց աւելի զուտն ու աղէկը տեսակ մը դափնիէ կելլէ, որ Չինու և Ճափոնի մէջ շատ կըգըտնուի [2] . նմանապէս Սումատրա ու Պօրնէօ կղզիներուն մէջ տեսակ մը ծառէ կելլէ, որուն յատկութիւնները տնկաբանները դեռ աղէկ մը չեն որոշած . քափուրը աս ծառերուն փայտին ու կեղեւին մէջտեղը կըգոյանայ, ու խէժի պէս դուրս չելլեր, հապա մասնաւոր արհեստով մը կըհանուի . և ասանկ զուտ ելածը արևելք աւելի յարգի է ։

Ճափոնցիք քափուրը դափնիէն աս կերպով կըհանեն . նախ դափնիին փայտը մանր կըկըտրտեն, ջրով մէկտեղ պղնձէ մեծ խալկիններու մէջ կըդնեն, ու կաւէ խուփով [3] կըգոցեն . աս խուփին ալ ներսի դին բըրինձի յարդէ [4] շինած չուանով հիւսած կըլլայ ։ Բանի որ կըսկսի եփիլ՝ քափուրը ջրին գոլորշիքներուն հետ վեր կելլէ, ու յարդէ չուաններուն վըրայ կըկպչի կաթիլ կաթիլ՝ մոխրագոյն հատիկներ ձևացած ։ Գործողութիւնը լմըննալէն ետև խուփը կըբանան ու զտուած քափուրը կըհանեն կըժողվեն ։

Քափուրը Չինաց ու Ճափոնի երկիրներէն գալէն ետքը, ատենով միայն

1 Քէաֆիւր ։
2 Լատ. Laurus camphora.
3 Գափաք ։
4 Փիրինճ սամանը ։